Սիսիան քաղաք

Բնակչություն՝ 15934

Գտնվում է Երևանից մոտ 217 կմ հեռավորության վրա, Երևան-ԼՂՀ, Երևան-Իրան ավտոմայրուղուց 6-7 կմ հարավ, Որոտան գետի երկու ափերին, ծովի մակարդակից 1600 մ բարձրության վրա: Սիսիան բազմաբնակավայր համայնքի վարչական կենտրոնն է:

Սիսիանում ձմեռը երկարատև է: Կայուն ձյան շերտը պահպանվում է 3-4 ամիս: Հունվարի միջին ջերմաստիճանը -4.8 °C, միջին տարեկանը՝ 6.9 °C, բացարձակ նվազագույնը՝ -34 °C: Ձմռան եղանակային ռեժիմը բնութագրվում է որպես կայուն և շատ կայուն: Ձմեռային եղանակներն առանձնանում են արևոտությամբ և անհողմ օրերի զգալի քանակով:

Գարունը զով է, երկարատև (2-3 ամիս), չափավոր սառը: Սկսվում է գարունն ապրիլի երկրորդ կամ երրորդ տասնօրյակից և վերջանում է հունիսի երկրորդ կամ երրորդ տասնօրյակում: Մայիսն ամենաանձրևային ամիսն է, ամսական տեղումների քանակը տատանվում է 70-100 մմ:

Ամառը չափավոր տաք է, տևում է 2-3 ամիս, գերակշռում են պարզ եղանակները: Հուլիսի միջին ջերմաստիճանը 17.9 °C, բացարձակ առավելագույնը հասնում է 36 °C: Տարեկան տեղումների քանակը տատանվում է 25-56 մմ:

Աշունը զով է: Առաջին աշնանային ցրտահարությունները լինում են հոկտեմբերի առաջին և երկրորդ տասնօրյակներում, երբեմն սեպտեմբերի առաջին տասնօրյակում: Անսառնամանիք օրերի թիվը կազմում է 120-180 օր:

Սիսիանում աղբյուրաշինությունը շատ հին պատմություն ունի: Ամենահին աղբյուրը, որը մեզ է հասել Բռնակոթի Թումի աղբյուրն է՝ կառուցված 1650-1660-ական թվականներին: Տարածաշրջանում անգամ սրբացվել, խորհրդավոր բնույթ են հաղորդել աղբյուրներին: «Անունով» աղբյուրի առեղծվածի մասին նշանավոր ազգագրագետ Երվանդ Լալայանը գրել է, թե կաթ չունեցող մայրերը աղանձ են արել, ծաղ տալով հասել և մնացած աղանձը լցրել աղբյուրի մեջ, մոմ վառել և կաթ խնդրել: Տարածաշրջանի շատ գյուղերում կան առանձնացված աղբյուրներ, որոնց ակի մեջ երաշտ տարիներին խաչ է դրվել՝ անձրևի ակնկալությամբ: Այդ տիպի աղբյուրները տարածաշրջանում հայտնի են «Խաչ աղբյուր» ընդհանուր անունով: Երաշտը վերացնելու ակնկալիքով գյուղացիները գութանով վարել են նաև այդ տիպի աղբյուրների ավազանները: Ամեն մի աղբյուր ճարտարապետական փոքրիկ մի կոթող է: Աղբյուրները տարածաշրջանում դիտվում է ոչ միայն առատության, հարատևության, այլ նաև անմահության խորհրդանիշ: